ուսուցիչն Սրապիոն Ուռհայեցին և ապա իր աշակերտը՝ Մովսէս Տաթևացին։

Գրիգոր վրդ. Կեսարացի, հակառակորդ Մելքիսեդեկ կաթողիկոսի և անոր ձեռնասուն Յովհաննէս Խուլին, արդէն բնաւ հաւանական չէր որ գիջանած ըլլար անկէ ձեռնադրութիւն ստանալու, մանաւանդ երբ ինքն իբր Կիլիկիոյ աթոռին թեմական և Ազարիա կաթողիկոսէն դրկուած Սիսի կապուած էր և իբր այն՝ արդէն պատրիարք ընտրուած էր։

Հետևաբար հաւանական չէր որ Կ. Պոլսոյ ժողովուրդը էջմիածնայ կաթողիկոսին դիմած ըլլար և ինքն ալ այդ մտքով ճամբայ ելած ըլլար։

Իրողութիւնը՝ իր մանրամասնութիւններուն մէջ որոնք նոյն իսկ իր գրչով կը պատմուին՝ ասկէ տարբեր եզրակացութեան մը չեն կրնար հասցնել։

Գրիգոր վրդ. Կեսարացի, այսպէս 1602 մայիս 29էն մինչև յունիս 28, երեսուն և մէկ օրերու միջոցին, ձեռնադրուեցաւ «եպիսկոպոս եւ առաջնորդ Ստամբօլու» ըստ Յակոբ քհ. Կեսարացիի և «ի վերայ Ստամբօլու պատրիարգ» ըստ Սիմէոն Սսոյ կաթողիկոսի թուղթին (էջ 66)։

Հ. Գրիգորիս վրդ. Գալէմքեարեան ևս անշուշտ հիմնուելով այս վկայութեանց վը-